ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 57-65 *Կառավարում*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.2.057

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՆԱՆԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ժամանակակից հասարակություններում տնտեսական աճի բարելավմանն ուղղված իրավատնտեսական կարգավորումների համակարգում ավելի գերակայող են դարձել կազմակերպությունների սնանկացման կառավարման գործընթացները: Տնտեսության զարգացման հիմնական ինստիտուտներից մեկը կազմակերպությունների սնանկության գործընթացի պետական կարգավորումն է, որն իրականացվում է իրավատնտեսական համապատասխան ակտերի և այդ գործընթացը սպասարկող կառուցակարգերի միջոցով: Ըստ որում, այդ ինստիտուտի արդյունավետ գործունեությունն ապահովում է ինչպես առանձնացված, այնպես էլ դրան առնչվող կազմակերպությունների խմբի և ոլորտների գործունեությունը, որը նպաստում է և՛ բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը, և՛ պետական բյուջեի եկամուտների ավելացմանը: Սնանկության արդյունավետ կառավարումը հավելյալ լծակների գործադրում է պահանջում տնտեսության կառավարման ճգնաժամային իրավիճակներում:

Բանալի բառեր – *սնանկության կանխարգելում և կառավարում, կազմակերպության լուծարում, ճգնաժամային իրավիճակ, ֆինանսական առողջացում, ֆինանսական կայունություն*

Հայաստանի Հանրապետության տնտեսության արդյունավետ գործառնումը մեծապես պայմանավորված է առևտրային կազմակերպությունների արդյունավետ գործունեությամբ, որի խաթարումը, անկախ այն պայմանավորող հանգամանքներից, առաջացնում է սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրներ: Ի հավելումն ստանդարտ իրավիճակում առաջացող խնդիրների՝ 2020 թվականից COVID-19 համավարակը աշխարհին առերեսեց մարդկության պատմության մեջ չտեսնված ծավալի հասնող ճգնաժամի հետ, որը սպառնում է ոչ միայն մարդկանց առողջությանը, ստեղծում աշխարհաքաղաքական ազդեցություն ունեցող խնդիրներ, այլև, ըստ էության, պատնեշեց առևտրային կազմակերպությունների անխափան և շահութաբեր գործունեությունը՝ սկսած 2021 թ. երկրորդ կիսամյակից: Այդ պատնեշումը դրսևորվեց երբեմն չհիմնավորված լոկդաունով. օրինակ՝ բաց շինարարական աշխատանքների արգելմամբ ու աջակցման ծրագրերի ոչ հստակ հասցեականության պատճառներով: Դրան հաջորդող 44-օրյա պատե-

բազմը վերջնական ուժգին հարվածն էր մեր տնտեսությանը, որի արդյունքը 2020 թ. ՀՆԱ-ի 7.6 տոկոսով անկման ցուցանիշն էր: Նշված հիմնախնդիրների լուծման տարբեր ուղիների որոնումներն ու արդյունավետ լուծումների առաջադրումը ներկայումս խիստ արդիական են դարձնում առևտրային կազմակերպությունների շահութաբեր գործունեությունը:

Ինչպես առողջապահության բնագավառում առաջնայնությունը տրվում է ախտորոշմանն ու կանխարգելմանը (պրոֆիլակտիկային), այնպես էլ կազմակերպությունների սնանկության պարագայում *ֆինանսական կայունության ապահովումն ու ֆինանսական առողջացումը դառնում են կազմակերպության չլուծարման գրավական:* Նման եզրահանգումը հիմնավորվում է վիճակագրությամբ: *Նկատելի է, որ անցած տարիների ընթացքում կազմակերպությունների սնանկության գործերի վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ ֆինանսական առողջացումը իրեն զգացնել չի տվել, իսկ առաջնությունը տրվել է այդ գործընթացում ընդգրկված կազմակերպությունների ոչ թե առողջացման, այլ լուծարման դեպքերին:*

ՀՀ կազմակերպությունների գործունեության ժամանակավոր դադարեցում: ՀՀ-ում կորոնավիրուսի համավարակի տարածմամբ և 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ նախորդ տարվա ընթացքում ՀՀ-ում իրենց գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել են 22154 կազմակերպություն և ԱՁ, ընդ որում՝ միայն 7760–ը՝ հոկտեմբեր–դեկտեմբեր ամիսներին[1]: 2020 թ. 7563-ով կամ 52 տոկոսով ավելի շատ կազմակերպություններ են դադարեցրել իրենց գործունեությունը, քան 2019–ին[2]: Գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած կազմակերպությունների մեջ չեն ընդգրկվել պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և պետական կառավարչական հիմնարկները: Սնանկացումից և հնարավոր կորուստներից խուսափելու համար տնտեսավարող սուբյեկտները, փաստորեն, գերադասել են ժամանակավորապես դադարեցնել իրենց տնտեսական գործունեությունը, ինչի արդյունքում փակվել են բազմաթիվ աշխատատեղեր, և նվազել են հարկային մուտքերը: Պաշտոնական վիճակագրությունից պարզ է դառնում, որ *ճգնաժամի ամենամեծ հարվածը ստացել է փոքր և միջին բիզնեսը,* ինչը կանխատեսելի էր, քանի որ *կառավարության աջակցության ծրագրերից և հարկային արտոնություններից հիմնականում օգտվել են խոշոր բիզնեսի սեփականատերերը*[3]: Հավելենք

[1] Տե՛ս https://www.petekamutner.am/, դիտման ամսաթիվ՝ 05.03.202:1

[2] Խոսքը այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասին է, որոնք ներկայացրել են ժամանակավոր դադարեցման վերաբերյալ դիմումներ և մինչև 2021 թ. հունվարի 13–ը չեն վերսկսել գործունեությունը:

[3] Տե՛ս ՀՀ կառավարության կողմից կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրեր, https://www.gov.am/am/covid-19-cragrer./, դիտման ամսաթիվ՝ 05.03.2021

նաև, որ, ըստ ՊԵԿ–ի տվյալների, 2020 թ. լուծարվել (հաշվառումից հանվել) է 4918 կազմակերպություն և ԱՁ: Այսինքն՝ այդքան կազմակերպություն ոչ թե ժամանակավորապես, այլ վերջնականապես դադարեցրել է իր գործունեությունը ՀՀ-ում:

Նման մոտեցման հետևանքով ըստ էության ոչնչացվում է սնանկության գործընթացում գտնվող կազմակերպությունների՝ տարիների ընթացքում ձևավորված սոցիալական ենթակառուցվածքը, ավելանում է գործազուրկների թվաքանակը, խաթարվում են կայացած արտադրատնտեսական կապերը՝ շղթայաբար տարածվելով ողջ տնտեսության վրա, և, որպես հետևանք փոշիանում են այդ կազմակերպությունների ակտիվները: Դրանով է բացատրվում նաև, որ Հայաստանի Հանրապետությունում առևտրային կազմակերպությունների սնանկության գործընթացը առաջադիմական փորձ ունեցող երկրների համեմատությամբ ժամանակի տեսանկյունից ձգձգվում է 2-3 անգամ ավելի շատ, անհամեմատ բարձր են սնանկության գործընթացի կազմակերպման ծախսերը, և այս ամենի պատճառով ցածր է սնանկության գործընթացի մեջ ընդգրկված ակտիվների վերադարձի մեծությունը:

ՀՀ կազմակերպությունների սնանկացում: ՀՀ տնտեսությունում վնասով աշխատող կամ մեծ թվով պարտավորություններ ունեցող կազմակերպությունները չեն կարող դիմագրավել ներկա մարտահրավերներին և արդյունավետ կազմակերպել ու կառավարել բիզնես գործընթացները: Այդ տեսանկյունից կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացմանն ու կարգապահության բարձրացմանն ուղղված ձեռնարկումները պետք է դասվեն կայուն տնտեսական աճի ապահովման առանցքային խնդիրների շարքին: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված ՀՀ կազմակերպությունները 01.01.2021 թ. դրությամբ գերազանցում են 232 հազարը:

Համեմատելով ՀՀ-ում գործող և սնանկ կազմակերպությունների թվաքանակը՝ նշենք, որ ՊԵԿ–ի տվյալների համաձայն՝ վերջին 3 տարում ՀՀ-ում սնանկ են ճանաչվել[4] 1752 տնտեսավարող սուբյեկտներ, որոնք պետական բյուջեին պարտք են 27 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 2018–ին սնանկ են ճանաչվել 417, 2019–ին՝ 561, իսկ 2020–ին 774 տնտեսավարող սուբյեկտներ (անհատ ձեռնարկատեր,

[4] Ըստ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն), «Սնանկության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/

իրավաբանական, ֆիզիկական անձինք, կազմակերպություններ և այլն)։

Գծապատկեր 1

ՀՀ գրանցված կազմակերպությունների կառուցվածքն ու թվաքանակը 01.01.2021 թ. դրությամբ[5]



Հատկանշական է, որ արտակարգ և ռազմական դրության պայմաններում ՀՀ-ում սնանկ ճանաչված տնտեսավարողների թիվը 2019 թ. համեմատ աճել է 213-ով (կամ 40%-ով)[6]։ Համեմատության համար նշենք, որ 2020 թվականի 1-ին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՌԴ-ում սնանկացած քաղաքացիների և ԱՁ-ների քանակն ավելացել է 47,2 տոկոսով, իսկ սնանկացած կազմակերպությունների քանակը նվազել է 26 տոկոսով։ Կորոնավիրուսի պատճառով Ռուսաստանի դատական համակարգը քննել է միայն անհետաձգելի գործեր, իսկ մայիսի 12-ից հետո դատական գործընթացը վերսկսվել է։ 2020 թվականի 2-րդ եռամսյակում ՌԴ-ում

[5] Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ https://www.e-register.am/am/docs/282, (դիտման ամսաթիվը՝ 05.05.2021թ.)

[6] 2020թ–ին սնանկ ճանաչված տնտեսավարող սուբյեկտների սնանկության վարույթների ընթացքում ՀՀ ՊԵԿ-ը ներկայացրել է 10,5 մլրդ ՀՀ դրամի չափով պահանջները հաստատելու մասին դիմումներ:

20362 քաղաքացի և 1895 կազմակերպություն հայտարարվել են սնանկ: Սնանկ ճանաչվելու համար դատարան դիմած դիմումները վերոնշյալ ժամանակատվածում նվազել են՝ վարկատուների գծով՝ 11.9 տոկոսով, պարատատերերի գծով՝ 4,2 տոկոսով[7]:

Գծապատկեր 2

ՀՀ սնանկացած կազմակերպությունների կառուցվածքն ու թվաքանակը 01.01.2021թ. դրությամբ[8]



Նշվածը լուրջ ազդակ է սնանկության հատկապես կազմակերպման գործընթացում տեղ գտած լուրջ թերությունների, սնանկության կանխարգելման ու կառավարման տնտեսահիրավական կարգավորումների մակարդակի բարձրացման պահանջի բավարարման համար: Այդ կարգավորումները, սկիզբ առնելով կազմակերպությունների ֆինանսատնտեսական իրավիճակի ախտորոշումից, պետք է միտված լինեն ինստիտուցիոնալ (դատական համակարգի), տեղեկատվական և ընթացակարգային բարելավումների իրականացմանը: Այս հանգամանքն ընդգծում է սնանկության կանխարգելման ու գործընթացի արդյունավետ կառավարման կարևորությունը տնտեսական քաղաքականության իրականացման ընթացքում: Սպառողական գների կայունության պայմաններում աշխատատեղերի պահպանումը կառավարության ու Կենտրոնական բանկի առաջնահերթ խնդիրներն են: Դրանք սրվել են ՀՀ-ում 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, 2014 թ. ՌԴ փոխարժեքի կտրուկ փոփոխման, 2020 թ. մարտ ամսվանից սկսած COVID-19 համավարակի և 2020 թ. սեպտեմբերի 27-ին

[7] Տե՛ս http://www.finmarket.ru/, դիտման ամսաթիվ՝ 05.03.2021:
[8] Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ http://www.petekamutner.am/

սկսված 44-օրյա պատերազմի հետևանքով, որոնք պահանջել են ճգնաժամային կառավարման տարրեր: Այդ տարրերը ներմուծվել են աջակցության տարաբնույթ ծրագրերի միջոցով՝ 2009 թ. պետական բյուջեի պակասուրդի մեծացմամբ՝ մինչև 7.5 տոկոս, 2020 թ. փոքր և միջին ձեռնարկություններին աջակցման ծրագրերի իրագործմամբ՝ շուրջ 150 մլրդ դրամ սոցիալական փաթեթների շրջանակներում: Այս համատեքստում սնանկության արդյունավետ մեթոդների ու մոդելների, ընթացակարգերի ու կառուցակարգերի շարունակական բարելավումների պահանջը այլընտրանք չունի ճգնաժամային և հետճգնաժամային հետևանքների չեզոքացման տեսանկյունից: Բազմաչափանիշային հիմավորումներով աջակցման ծրագրերի մշակումն ու կենսագործումը խիստ արդյունարար կարող են լինել, եթե *այդ չափանիշները ներառում են թողարկվող արտադրանքի կամ մատուցված ծառայության արտահանելիության, բարձր արտադրողականության և այլ ցուցանիշներ*: Չափանիշների շարքում առանձնակի տեղ պետք է զբաղեցնեն կազմակերպություններում կայուն աշխատատեղերի պահպանմանն ու հավելյալ աշխատատեղերի ստեղծմանը միտված գործողությունները: Արտադրության գործոնների թվում մարդկային կապիտալի բաղադրիչը (ինժեներների, վարձու աշխատող այլ մասնագետների կարողությունները) առանձնահատուկ է, և ճգնաժամի պարագայում ամենամեծ հարվածը ստանում է այդ բաղադրիչը: Կազմակերպության չաշխատելը, այն է՝ պահանջարկի նվազումը հանգեցնում է ֆինանսատնտեսական հետագծին, առավել ևս՝ եկամտաբերության ավելի նպաստավոր շեմին: *Դրանց տնտեսահիրավական կարգավորումները իրագործելի կդառնան, եթե կիրառվի, օրինակ, հետևյալ մոտեցումը՝ վարկերի տրամադրումը այն հաշվով, որ դրանք վերաճեն դրամաշնորհների, տրվեն հարկային արձակուրդներ և այլն: Այլ կերպ՝ օգնությունը պետք է ուղղված լինի աշխատատեղերի հնարավորինս պահպանմանն ու ավելացմանը:*

Տնտեսության գործունեությունը արդյունավետ է այնքան ժամանակ, քանի դեռ փողը շարունակում է կատարել շրջապտույտ: Տարաբնույթ գործոնների ազդեցությունը երբեմն կարող է կազմակերպությունների գործունեության ճգնաժամային իրավիճակներ առաջացնել, նույնիսկ առաջացնել սնանկացում: Վերջինիս կառավարման հիմնական խնդիրը պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռված պաշտպանությունն է, ինչպես նաև տարատեսակ ռիսկերի կանխումը: Տնտեսական յուրաքանչյուր գործունեություն, որը միտված է շահույթ ստանալուն, պայմանավորված հնարավորինս ճշգրիտ կառավարչական որոշումների կայացմամբ, որով խնդրի լուծումը ստանում է հակաճգնաժամային ուղղվածություն: Վերջինս բովանդակում է միջոցների հայտնաբերման ու հաղթահարման գործընթացը՝ կանխելու ճգնաժամային իրավիճակը:

Եթե 44-օրյա պատերազմը նյութական և բարոյական լուրջ վնասներ հասցրեց ՀՀ-ին և Արցախին, ապա COVID-19 համավարակը լուրջ ցնցումներ առաջացրեց համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում (հատկապես նավթի գների տատանումով)[9]: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է համաշխարհային բրենդների ցանկը, որոնց վրա ևս էապես ազդել է COVID-19-ը:

Աղյուսակ 1

COVID-19-ից տուժած համաշխարհային որոշ բրենդների ցանկ[10]

Սնանկ է ճանաչվել	Սնանկության դիմում է ներկայացրել	Դադարեցրել է գործունեությունը
Flybe բրիտանական ավիաընկերությունը	Victoria's Secret	Zara-ն փակել է 1200 խանութ
Gold's Gym	Ավտոմեքենաների վարձակալության ամենամեծ ընկերություն Hertz-ը	La Chapelle-ն փակել է 4391 խանութ
	Մեծ բեռնափոխադրող ընկերությունը՝ Comcar-ը	Chanel-ը դադարեցրել է արտադրությունը
		Hermes-ը դադարեցրել է արտադրությունը
		Patek Philippe-ը դադարեցնում է արտադրությունը
		Rolex-ը դադարեցնում է արտադրությունը
		Starbucks-ը փակում է 400 խանութ

Կազմակերպությունների սնանկացման երևույթները և անվճարունակության փուլում հայտնվելը կարող են պայմանավորված լինել մի շարք պատճառներով, սակայն հստակ է այն, որ իրավիճակը բնութագրող վիճակագրության բացասական պատկերը մեծապես հետևանք է *շուկայի և պետության ոչ արդյունավետ գործունեության*: Հատկանշական է, որ պետության և շուկայի տնտեսական գործունեությունը փոխկապակցված է և կարող է չեզոքացնել միմյանց ձախողումները: Պետական գործառույթների ծավալը պետություն-շուկա հարաբերությունների համատեքստում ունի ներդաշնակեցման անհրաժեշտություն

[9] Համաշխարհային տվյալների համաձայն՝ COVID-19-ի պատճառով աշխատող բնակչության 25% -ից ավելին գործազուրկ է:

[10] Տվյալները հավաքվել են սոցիալական կայքերից:

տարաբնույթ կանխադրույթներով: Դրանցից են բիզնեսի և իշխանության տարանջատումը, կազմակերպությունների ֆինանսական առողջացումը և այլն: Պետության մակարդակում կազմակերպությունների՝ անվճարունակության փուլում հայտնվելը[11] սերտորեն կապված է շուկայի հետ. այստեղ տեղի ունեցող ցանկացած փոփոխություն, անկախ դրանց պատճառային հիմքերից, ազդում է պետության վրա: Այս իրավիճակները կարող են մասնավորաբար պայմանավորված լինել ինչպես հասարակության նախասիրություններով ու վարքագծով, այնպես էլ բյուրոկրատական մենաշնորհներով: Շուկայի մակարդակում դրանք կախված են հանրային բարիքների, արտադրության, բնական մենաշնորհների կարգավորումից, որոնք պետությունը շատ հաճախ հնարավորություն չի ունենում արդյունավետ լուծելու: Կազմակերպության մակարդակում տեղի ունեցող թե՛ դրական, թե՛ բացասական գործընթացները մեծապես կախված են վերոնշյալ երկու մակարդակներում տեղի ունեցող շարժընթացներից: Ակնհայտ է, որ համաշխարհային տնտեսությունում անմրցունակ կազմակերպությունները ինքնաբերաբար դուրս են մղվում շուկաներից՝ չբավարարելով բիզնեսի կենսունակությունն ապահովող մենեջմենթի, մարքեթինգի ոլորտներում ճիշտ կողմնորոշելու և իրատեսական որոշումներ կայացնելու պայմանները: Աղյուսակ 1-ը վկայում է հենց այն մասին, որ համաշխարհային շուկայի առանձին հատվածներում տատանումները բացասաբար անդրադարձան նույնիսկ մեծ շահութաբերություն ունեցող ձեռարկությունների վրա:

Զարգացած տնտեսություն ունեցող երկրների՝ *սնանկացման կանխարգելմանն ուղղված օրենսդրական ակտերը հիմնականում միտված են ոչ թե սնանկացման գործընթացի կառավարմանն ու կարգավորմանը, այլ կանխարգելմանը*, այսինքն՝ առաջնային խնդիր է համարվում ձեռնարկության ֆինանսական առողջացումը: Ցանկացած պետության համար առաջնային խնդիր պետք է լինի ուժեղ, կենսունակ ձեռնարկությունների պահպանումն ու աշխատատեղերի ավելացումը: Հավելենք, որ այդպիսի մոտեցման տրամաբանությունը «սնանկացում» երևույթը կենդանի օրգանիզմի համեմատության մեջ դիտարկելն է, քանի որ յուրաքանչյուր դեպք պետք է համալիր վերլուծվի, և տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղորդվի կանխարգելմանը:

Իրավիճակների ահագնացող վտանգը անհրաժեշտություն է առաջացնում ստեղծելու ՀՀ սնանկության ինստիտուտի զարգացման նոր նախադրյալներ, որը կամրապնդի իրավաքաղաքական, տնտեսական դաշտը և ֆինանսական կայունությունը, ինչպես նաև կմշակի սնանկացման կանխարգելման նոր մոտեցումներ:

Կազմակերպության ֆինանսատնտեսական իրավիճակի օբյեկ-

[11] Տե՛ս **Архипова О. В**. Анализ провалов государства и провалов рынка в сравнительной форме, 2010, 27(208), էջ 12-16:

տիվ վերլուծության տրամաբանությունը ակներև է դառնում հետևյալ զուգահեռները իրականացնելիս. կախված այն բանից, թե ինչպես է առողջապահության ոլորտում կատարվում հիվանդության ախտորոշումը, դրանով էլ պայմանավորված է հետագա բուժման բարենպաստ ելքը: Նույն կերպ՝ որքանով ճիշտ են ախտորոշվում ու տարանջատվում առողջ և մրցունակ կազմակերպությունները պոտենցիալ սնանկ կազմակերպություններից, այդքանով մեծանում է հավանականությունը խուսափելու սնանկության գործընթացում ընդգրկվելուց, առավել ևս՝ սնանկության հետևանքով լուծարվելուց: Նշված խնդրի լուծումը արդեն իսկ նախապայման է միկրոտնտեսության մակարդակում սնակության դեպքերը սահմանափակելու, դրանով իսկ հասարակությանը հասցվող մարդկային, նյութական ու ֆինանսական վնասները չեզոքացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

ВАРСЕНИК САРГСЯН – ***Основные вопросы банкротства организаций с точки зрения кризисного управления.*** **–** В современных условиях развития общества процессы управления банкротством организаций стали более приоритетными в системе правовых и экономических норм, направленных на экономическое развитие. Одним из основных институтов экономического развития является государственное регулирование процессов банкротства организаций, осуществляемое соответствующими правовыми актами и структурами. При этом, эффективные действия института банкротства обеспечивают деятельность как отдельных, так и связанных групп организаций, что способствует увеличению занятости, повышению уровня жизни населения, увеличению доходов государственного бюджета. Эффективное управление банкротством требует допольнительных средств воздействия в кризисных условиях управления экономикой.

Ключевые слава: *предотвращение банкротства и управление, ликвидация организации, кризисная ситуация, финансовое оздоровление, финансовая устойчивость*

VARSENIK SARGSYAN – ***Organizations Bankruptcy Issues from the Crisis Management Perspective.*** **–** In modern societies, the organization's bankruptcy process management has become more dominant aimed to improve economic growth in the framework of the legal and economic system regulations. One of the main institutions of economic development is the organization's bankruptcy process state regulation, which is carried out through the relevant legal acts and structures that serve that process. Therefore, the effective operation of this institution would ensure the functionality of separated and related organizations and spheres, and would promote the employment of the population and the increase of its level, and would increase the state budget revenues.

Key words: *bankruptcy prevention and management, liquidation of the organization, crisis situation, financial recovery, financial stability*